

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

1993 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ծննդյան 85-ամյակին: Նստաշրջանը կոչված էր մեկ անգամ ևս ներկայացնելու Վեհափառ Հայրապետի հոգևոր, հասարակական, մշակութային գործունեությունը նորովի մեկնաբանություններով:

Նստաշրջանին ներկա էին Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսներն ու թղթակից-անդամները, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, մտավորականներ և այլ հասարակական ու մշակութային գործիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը, որը սեղմ գծերով ներկայացրեց Վեհափառ Հայրապետի երիտասարդ տարիներից մինչև այսօր անցած ուղին և գործունեությունը:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Մեծարգո Վեհափառ Հայրապետ,

Հարգելի տիկնայք և պարոնայք, թանկագին հյուրեր,

Սեպտեմբերյան այս օրերին հայ ժողովուրդը ամենուրեք՝ Հայաստանում թե Սփյուռքում, մի առանձին շուքով նշում է Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակը: Դեռևս 38 տարի առաջ, երբ Վազգեն Ա Հայրապետն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեծ ուրախություն ունեցանք նրան տեսնելու Ս. Էջմիածնի կամարների տակ: Այն ժամանակ նա հավաստիացրեց մեզ, որ Մայր Աթոռը,

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր մեկուսացված, անշուք վիճակից բարձրանալու է համաշխարհային ճանաչման աստիճանին:

Կաթողիկոսական գահակալության անցած 38 տարիների ընթացքում հայ ժողովուրդը ականատես եղավ Վեհափառ Հոր ամբողջական նվիրվածությանը ի սեր Աստուծո, ի սեր հայրենիքի և ի սեր ազգի: Աշխարհով մեկ կատարած իր շրջագայություններով և ոգեշունչ խոսքի զորությամբ, ճգնելով ու տառապելով նա բարձրացրեց հայ անունը, ճանաչել տվեց ամենուր նրա մեծ ցավը:

Այսօր ի սրտե կարող ենք ասել, որ մենք ազգովին հպարտ ենք մեր սիրելի Վեհափառ Հայրապետով, ազգովին երախտապարտ ենք նրան՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած իր մեծ սիրո և նվիրվածության համար:

Տակավին երիտասարդ ուսուցիչ, Լևոն-Կարապետ Պալճյանը իր շուրջը հավաքված մի խումբ նվիրյալ երիտասարդների հետ խմբագրում էր «Հերկ» ամսագիրը: Դեռևս 1937 թ. նա, խորապես համոզված, կոչ էր անում իր հայրենակիցներին՝ լինել ժողովրդի հետ՝ որպես կենսաբանական արժեք, նույնանալ ազգի և մշակույթի հետ՝ որպես բարոյական, հոգևոր արժեք, նույնանալ հայրենիքի հողի, ջրի հետ՝ որպես աշխատող, ստեղծագործող արժեք, վերջապես նույնանալ հայ պետությունը ամրացնող և նրա ապագան իրականացնող իդեալների հետ՝ որպես քաղաքական արժեք: Ահա, մեր կարծիքով, պատկերը նշմարիտ հայի: Այսպիսի հասուն, կարգավորված գաղափարներով Ս. Էջմիածնի նվիրական միջավայրում վայելատակեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի միտքը:

Եկան ու անցան տարիները, և ձյունը Արարատի գագաթից իջավ նաև Ամենայն Հայոց Հայրապետի գլխին՝ ավելացնելով նրա իմաստությունը, սերը իր ժողովրդի հանդեպ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին սովորաբար կոչում են «շինարար» և չեն սխալվում: Իրավամբ նա Հայ Եկեղեցու պատմության մեջ հանդես եկավ որպես բացառիկ շինարար Կաթողիկոս, ի կատար ածեց հայի շինարարական ու կառուցողական սխրանքները: Վազգեն Ա-ի ղեկավարությամբ են վերականգնվում և կյանքի կոչվում կիսակործան ու լքված մեր վանքերը, որոնց կամարների տակ կրկին հնչեցին հայոց շարականները: Նրա ճաշակով վերականգնվեց Վեհարանը, նրա նախաձեռնությամբ կառուցվեց «Աբեղ և Մարի Մանուկյան Գանձատունը», վերակառուցվեցին Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Ս. Շողակաթը և Ս. Գեղարդը, Հաղարծինն ու Սևանը, Տաթևն ու Խոր Վիրապը:

Մեծարգո Վեհափառ Հայրապետ, Դուք երկրե երկիր, գաղթօջախից գաղթօջախ տարածեցիք հայ ժողովրդի միասնության ու հավերժության գաղափարները, Ձեր անձնական օրինակով ոգևորեցիք հայրենիքից հեռու, սակայն միշտ հայրենիքի հոգսերով ապրող մեր քույրերին ու եղբայրներին, Ձեր խոսքերով լույս սփռեցիք աշխարհով մեկ հայերի հոգիների վրա:

Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր իմաստությամբ ժողովրդին է ներկայանում որպես մտավորական և գիտական գործիչ: Բավական է նշել, որ վերջին 60 տարիների ընթացքում նրա գրչի ուժով ստեղծվել են մոտ երկու հարյուր տարբեր բնույթի գիտական աշխատություններ և հարյուրավոր հայրապետական կոնդակներ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, բարձր գնահատելով Ամենայն Հայոց Հայրապետի գիտական վաստակը, միաձայն նրան ընտրեց ակադեմիայի պատվավոր անդամ: Մեզ բոլորիս բախտ է վիճակվել ակադեմիայի ժողովներում լսել Վեհափառի իմաստալից ելույթները և կանխատեսումները ազգային գիտության զարգացման մեծ հեռանկար-

ների մասին: Այժմ էլ հաստատուն կամքով և մեծ ոգևորությամբ նա շարունակում է հայ ժողովրդին պարգևել իր մտքի արգասիքը՝ նորանոր աշխատություններ, որոնք հարուստ կենսափորձ ունեցող մարդու փիլիսոփայական մտածումներն են: Հաստատ համոզումով կարող ենք ասել, որ Վեհափառն այսօր հայոց պատմության ձայնն է, որ ամեն տեղ հնչում է, մենք զգում ենք մեր ժողովրդի՝ հազարամյակների խորքը հասնող պատմության արձագանքը հանդիսացող այդ ձայնը որպես անփոխարինելի մի կամուրջ, որ հայոց հին դարերը կապում է մեր ժամանակների հետ:

Աղոթենք բոլորս, որ Աստված քաջառողջություն պարգևի մեր հարազատ Հայրապետին, որպեսզի դեռ երկար ժամանակ վայելենք նրա ներկայությունը ազգովին, և ամեն մեկս ներշնչվելով նրա հավատքով՝ մեր ուժերն ու կարողությունները ի սպաս դնենք մեր հայրենիքի և հայ ժողովրդի բարգավաճմանը:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ողջույնի ուղերձը կարդաց ակադեմիկոս Գևորգ Բրուտյանը:

Մեծ հետաքրքրություն առաջացրեցին նաև գիտության դոկտորներ Պ. Հ. Հակոբյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գիտահետազոտական վաստակը» և Հ. Մ. Թութունջյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գործունեությունը փիլիսոփայության, տրամաբանության և հոգեբանության բնագավառում» զեկուցումները:

Վերոհիշյալ զեկուցումներից հետո ներկաներին իր շնորհակալական խոսքը և հայրական օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Մեծահարգ Տիար նախագահ,

Հարգարժան գիտնական Տիարք, ներկաներ և սիրեցյալ հոգևոր եղբայրներ,

Խորագույն զգացումներով ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, Պարոն Նախագահ և Ձեր վարչության, որոնք կազմակերպեցին այս հավաքույթը՝ նվիրված իմ համեստ գործունեության վերջին տասնամյակներին: Անկեղծ ասած՝ ես բնավ չէի սպասում նման հանդիսավորության: Ես ինքս ինձ չեմ նկատում, բնականաբար, գիտնական և հետևաբար երախտապարտ եմ, որ այդ պատիվը ինձ մատուցվում է այստեղ, այս գիտության տաճարի կամարների տակ, որ Հայաստանի ազգային ակադեմիայի հաստատությունն է:

Անշուշտ այսօր, այս պահին ես իմ մասին չէ որ պիտի խոսեմ, ուզում եմ միայն մի պահ ընդգծել իմ անձի՝ հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ կապված: Ինչպես գիտեք, ես սփյուռքահայ եմ, ծնվել եմ Ռումինիայում, Բուխարեստ քաղաքում, 1908 թվականին, այնտեղ եմ մեծացել, իմ ողջ ուսումը մինչև համալսարան եղել է ռումինական և բնական կերպով ես հաղորդակցության մեջ եմ գտնվել տևապես ռումեն մշակույթի հետ, ռումեն գրականության, գիտության և քաղաքական կյանքի հետ և որոշ չափով մասնակից դարձել դրան: Գուցե հայաստանցիներդ լրիվ կերպով չեք հասկանում հոգեկան վիճակը արտասահմանի հայ մտավորականի, որ մանավանդ հումանիստական ոգով զարգանում է և բնական կերպով իր հոգին շա-

դախում տեղի ժողովրդի հոգևոր արժեքների հետ: Համենայն դեպս, ես այդ հոգեկան իրավիճակում եմ եղել, մի տեսակ տատանվող, և այդ ճանապարհով շարունակել եմ իմ կյանքը՝ ռումինական և հայկական: Այս ողբերգական վիճակը շատ երիտասարդներ են ապրում արտասահմանում և շատեր կորչում են, բնականաբար, հեռանալով հայկական կյանքից: Իմ կյանքի պայմաններն այնպես դասավորվեցին, որ ես կապված մնացի հայկական կազմակերպությունների հետ, և հետևաբար այդ տատանման շրջանում իմ մեջ ավելի ծանր կշիռ ստացավ հայկական ուղղությունը, եթե այսպես կարելի է ասել: Եվ իսկապես ես ամբողջպես հայկական զգացումներով տոգորվեցի և կերպարանափոխվեցի, կարող եմ ասել՝ վերածնվեցի 1945 թ., երբ առաջին անգամ այցելեցի Հայաստան, Ս. Էջմիածին՝ հանգուցյալ կաթողիկոսի ընտրության առիթով: Եվ հակառակ որ պատերազմը նոր էր վերջացել, և երկիրը ծանր վիճակի մեջ էր գտնվում, գրեթե այնպիսի վիճակ էր, ինչպես այսօր և նույնիսկ ավելի վատ, բայց և բոլորը ինձ համար երկրորդական եղան, ինձ համար բավելով, որ Արարատը տեսնեմ, Ս. Էջմիածինը տեսնեմ, տեսնեմ Երևանը և մեր ժողովրդի փայլուն աչքերը:

Ես սիրում էի առանձին ման գալ Երևանում, շուկաները մտնել, փողոցում խոսակցել հայ պարզ մարդկանց հետ: Այսպիսով ես կարող եմ ասել, որ վերածնվեցի, կարող եմ ասել զԱստված փնտրելու ճանապարհի վրա ես գտա Ս. Էջմիածինը, և այդ օրվանից իմ անձը, իմ կյանքը, իմ ողջ հոգեկան աշխարհը միացավ Ս. Էջմիածնի և հայրենիքի հետ, և այդ հոգեկան վիճակով է, որ, կարծում եմ, կարողացա իրագործել իմ կաթողիկոսական գահակալության շրջանին այն, ինչ որ ծանոթ է ձեզ: Ես երախտապարտ եմ ճակատագրին, որ սխալ ուղղությամբ չառաջնորդվեցի և մնացի հարազատ զավակը իմ սիրեցյալ մայր ժողովրդի: Ինչպես քիչ առաջ ասացի, իմ մասին չէ որ պիտի խոսեմ այսօր:

Արդ, ուզում եմ այս առիթն օգտագործել մի քանի խոհեր, մտածումներ արտահայտելու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին, որ նոր օրերում կոչված է նոր ճանապարհներ բաց անելու դեպի ապագան՝ հիմնված այն մեծ իրագործումների վրա, որոնք տեղի ունեցան վերջին տասնամյակների ընթացքում, հատկապես Վիկտոր Համբարձումյանի նախագահության տարիներին: Իսկապես Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հայ ժողովրդին պատիվ բերող հաստատություն է տասնյակ տարիներից ի վեր: Բազմաթիվ գիտական արժեք ներկայացնող գործեր գնահատանքի արժանացան արտասահմանի ծանոթ ակադեմիաների կողմից: Ակադեմիան պարզապես գիտությունների հավաքածու չէ, մի տեսակ արխիվային հիմնարկություն, որտեղ գալիս-հավաքվում են գիտնականների բոլոր գործերը: Ես այնպես եմ ըմբռնում, և ճիշտը այդ է, որ ակադեմիան կենդանի հաստատություն է՝ համադրող, սինթեզող բոլոր գիտությունների նվաճումները: Եվ կխորհիմ, թե այս ուղղությամբ պետք է զարգանա հետայսու Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան դառնա իսկապես գիտությունների տաճար, ազգային տաճար և կարողանա իր նպաստը բերել համաշխարհային գիտության գանձարանին: Սա պետք է լինի, իմ կարծիքով, հայ գիտնականների իդեալը: Մեր ժողովուրդը իր անցյալով, իր անցյալի արժեքներով ապացույցը տված է, որ ի վիճակի է առաջադեմ ազգերի հետ քայլելու, նույնիսկ երբ դժվարին քաղաքական պայմանների մեջ է գտնվել: Հետևաբար այս լավատեսությամբ ես մաղթում եմ, որ մեր ակադեմիան քայլ առ քայլ, աստիճան առ աստիճան բարձրանա այդ

բարձունքին: Ավելին, մեր օրերին էլ, կարծում եմ, քիչ-շատ խոսվում է համաշխարհային կամ միջազգային մի ակադեմիայի մասին: Այդ գաղափարը իբրև որոշում հրապարակվել է Բրիտանական Ակադեմիայի կողմից, Ռոյալ Սոսայթի անունով, 1900 թվականին, սակայն մնացել է չիրագործված: Այս գաղափարը կենդանի է մնացել մինչև մեր օրերը, և մարդկությունը սպասում է այն օրվան, երբ իրապես հնարավոր կդառնա կազմակերպումը, կյանքի կոչումը միջազգային մի ակադեմիայի, որին կմասնակցեն բոլոր ազգությունների գիտությունների ակադեմիաների գիտնականները իրենց նվաճումներով՝ իրենց նպաստը բերելու ընդհանուր առաջադիմության: Սա մի իդեալ է, որ ոչ միայն զուտ գիտական արժեք է ներկայացնում, այլ նաև՝ համամարդկային և նույնիսկ քաղաքական, որովհետև գիտությունը խաղաղարար գործոն է, գիտությունը մարդասիրական գործոն է, գիտությունը մարդկության բարօրությանը նվիրված աշխատանք է, և հետևաբար այդ իդեալը անհրաժեշտ է, որ իսկապես իրականանա:

Այդ մտածումները ես ունենում եմ մանավանդ այս օրերին, աշխարհի այս տագնապալի իրավիճակում: Մեր օրերին, ավելի բան քառասուն շրջաններում երկրագնդի վրա, պատերազմական գործողություններ են տեղի ունենում, երբ մարդիկ իրար են կոտորում: Այսպիսի վտանգի առաջ գտնվող մարդկությունը բնականաբար պետք է փնտրի խաղաղության, փոխադարձ հասկացողության, համերաշխության ճանապարհը, և գիտությունը, հետևաբար նաև ակադեմիաները, իրենց աշխատանքի կարևոր բաժինը պետք է բերեն՝ իրականացնելու համար այդ համամարդկային իդեալը: Եվ մտքով տակավին առաջ եմ գնում և պատկերացնում, որ, չգիտեմ երբ, գուցե առանձյակ տարիներ հետո, իրականանա Բրիտանական Ակադեմիայի երազանքը՝ ստեղծելու համաշխարհային մի Ակադեմիա: Իմ մաղթանքն է, որ մեր հայրենիքի գիտությունների ազգային ակադեմիան այնտեղ միշտ ներկա լինի իր գիտնականներով, իր գիտական նվաճումներով:

Այս մաղթանքով էլ ուզում եմ վերջացնել իմ խոսքը՝ կրկին շնորհակալություն հայտնելով ձեզ և մաղթելով, որ Աստված պահի-պահպանի ամբողջ, անվտանգ և միշտ առաջադիմության մեջ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան:

Հարգարժան Տիարք, իմ օրհնությունը ձեզ ամենքիդ: Ամեն:

Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքից հետո համապատասխանաբար իրենց զեկուցումներով հանդես եկան գիտությունների թեկնածու Ս. Ա. Ծտիկյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գրական-հրապարակախոսական գործունեության մասին», ակադեմիկոս Գ. Ս. Խանջյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրոք Մայր Աթոռում ստեղծված արվեստի նոր գործերի մասին», գիտությունների դոկտոր Վ. Մ. Հարությունյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և հայ ժամանակակից ճարտարապետների համագործակցությունը» և արվեստագիտության թեկնածու Մանյա Ղազարյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի թանգարանային գործունեությունը»:

Բոլոր զեկուցողները մեկ առ մեկ շեշտեցին և ընդգծեցին Վեհափառ Հայրապետի ջանքերն ու նվիրումը Հայ Եկեղեցու և ազգային արժեքների անաղարտ պահպանության համար: